M2 Սվաղ

Նկարագրություն

- Մոխրագույն
- Հանքային
- Էկոլոգիապես մաքուր և անվտանգ
- Օժտված բարձր ամրությամբ
- Կայուն եղանակային փոփոխությունների նկատմամբ

Բաղադրություն

Պորտլանդ ցեմենտ, ավազ, պոլիմերային և ցելուլոզային հավելանյութեր:

Նշանակություն

Նախատեսված է շինարարական ներքին և արտաքին մակերեսների (քար, աղյուս, բլոկ, բետոն) սվաղման և հարդարման համար: Օգտագործվում է նաև պատշարման պրոցեսում:

Մակերեսի նախապատրաստում

- Նախքան քսելը վերացնել հիմքի թույլ հատվածները, լայնացնել ճեղքերը:
- Մաքրել մակերեսը կեղտից, փոշուց, յուղի և ներկի հետքերից:
- Խորհուրդ է տրվում օգտագործվող մակերեսը մշակել «ՇԵՆ» ֆիրմայի բետոնկոնտակտով:
- 4-5 ժամ անց սկսել աշխատանքները:

Շաղախի պատրաստում

- Մաքուր տարողության մեջ լցնել 4,14 - 4,6 լ ջուր՝ 23 կգ չոր շաղախի համար:
- Աստիճանաբար ավելացնել չոր շաղախը և խառնիչի օգնությամբ խառնել մինչև համասեռ խառնուրդ ստանալը:

Օգտագործում

- Համասեռ խառնուրդը մակերեսին քսել չժանգոտվող ծեփիչի կամ մածկաթիակի օգնությամբ:
- Քսված շերտի հաստությունը պետք է լինի 1սմ-ից ոչ պակաս
- Աշխատանքներն իրականացնել+10°C-ից ոչ ցածր ջերմաստիճանային պայմաններում և օդի հարաբերական խոնավության 75%-ից ոչ բարձր պայմաններում:
- Աշխատանքներն ավարտելուց հետո գործիքները լվանալ ջրով:
- Օգտագործված պարկերը և շաղախի մնացորդներն աղբահանել սահմանված կարգով:

Քսվող մակերեսի ջերմաստիճան	+10°C-ից +30°C
Ջրի քանակ1կգ չոր շաղախի համար	180 - 200 մլ
Ջրի քանակ 23 կգ չոր շաղախի համար	4,14 - 4,6 լ
Շերտի հաստություն	1սմ-ից ոչ պակաս
Թաց շաղախի օգտագործման ժամկետ	մինչև 30 րոպե
Քսված շերտի կծկում	0,8 մմ/մ
Շերտի 1մմ հաստության դեպքում չոր շաղախի ծախս Նյութի ավելի ստույգ ծախսը կախված է օգտագործվող մակերեսի հարթությունից և քսվող ծեփամածիկի շերտի հաստությունից:	1 կգ/ 0.06 մ²
	23 կգ / 1,38 մ²

Փաթեթավորում

Թղթե և պոլիպրոպիլենային պարկեր՝ 23կգ զտաքաշով:

Պահպանում

Պահպանել չոր միջավայրում և չվնասված պարկերով փայտյա տակդիրների վրա, +40՛C-ից ոչ բարձր ջերմաստիճանի և 75%-ից ոչ բարձր օդի խոնավության պայմաններում: Պահպանման ժամկետը՝ փաթեթավորման վրա նշված արտադրման օրվանից 6 ամիս:

Անվտանգության կանոններ

- Պահել երեխաների համար անհասանելի վայրում:
- Աշխատանքներն իրականացնել՝ պահպանելով շնչառական օրգանների ապահովությունը:
- Խուսափել մաշկի հետ շփումից:
- Աչքի մեջ ընկնելու դեպքում աչքը լվանալ մաքուր ջրով, անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի:

Ուշադրություն

- Խառնուրդի խտանալուց հետո չի թույլատրվում ջուր ավելացնել, քանի որ դա կհանգեցնի խառնուրդի կպչողունակության նվազմանը և կնպաստի ճաքերի առաջացմանը:
- Այլ պայմաններում աշխատանքների իրականացման դեպքում վերոնշյալ ցուցիչները կարող են շեղվել:
- Արտադրողը պատասխանատվություն չի կրում աշխատանքների ոչ ճիշտ կատարման դեպքում: դեպքում: